ԶԵԿՈՒՑԱԳԻՐ

10 հունվար 2022թ.

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՀԱԿՈԲ ԲԱԼԱՍՅԱՆԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵԻ ԳՈՂՄԻՑ ԱՃՈՒՐԴԱՅԻՆ ՊԱՅԱՄԱՆԱԳՐԻԸ ՉԳՐԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հարգելի պարոն Բալասյան

Տեղեկացնում եմ Ձեզ, որ 2021թվականի դեկտեմբերի 20-ին կայացած աճուրդում Անահիտ Ավետիսյանի կողմից գնված Բյուրեղավան համայնքի Բյուրեղավան քաղաքի Զորավար Անդրանիկի փողոցի 2/84 հասցեում գտնվող 145քմ հողամասը, 82,9 քմ տնտեսական շինությունը և ավտոտնակը Հայաստանի Հանրապետության կադաստրի պետական կոմիտեն իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցրել է, պատճառաբանելով, որ 2010թվականի օգոստոսի 11-ի թիվ 2711164 սեփականության իրավունքի վկայականով գրանցված գործում առկա է նաև 7,6քմ ծածկարան որը սակայն նեռառված չէ համայնքի ղեկավարի 2021թվականի դեկտեմբերի 29-ի թիվ 538-Ա որոշման մեջ և օտարման պայմանագրում: Ուսումնասիրելով գործի ամբողջ փաթեթը պարզել եմ, որ 7,6քմ ծածկարանի մասին տեղեկությունները բացակայում են նաև ավագանու 2021թվականի մայիսի 14-ի թիվ 32-Ա որոշումում և «ՎԱՐՄՕՆ ՌԻԵԼԹԻ» ՍՊԸ անշարժ գույքի օտարման մեկնարկային շուկայական արժեքի գնահատման հաշվետվությունում: Առաջարկում եմ որոշումներում և պայմանագում կատարել համապատասխան լրացումներ:

Կից ներկայացնում եմ Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի գույքի նկատմամբ իրավունքի (սահմանափակման) պետական գրանցման վարույթը կասեցնելու մասին որոշումը:

Առդիր 1 (մեկ) թերթ:

Զեկուցող՝ Վոլոդյա Հայրապետյան

ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ
ՄՏԻՑ N 9-16/22
«10» 01 2022 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԱԴԱՍՏՐԻ ԿՈՄԻՏԵ

ՈՐՈՇՈՒՄ
ԳՈՒՅՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԻՐԱՎՈՒՆՔԻ (ՍԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ) ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՄԱՆ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՍԵՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ամսաթիվ՝ **05/01/2022**
Փաստաթղթի N՝ **Կ-05012022-07-0050**
գաղտնաբառ՝ **SLCW865PG4B4**

Հասցեատեր՝

Անահիտ Ավետիսյան

Անշարժ գույքի գտնվելու վայրը (հասցեն), անվանումը

Բյուրեղավան ք. Զորավար Անդրանիկի փողոց 2/84

*Ձեր **N 30/12/2021-17-0017** դիմումի հիման վրա վերը նշված անշարժ գույքի նկատմամբ հարուցված իրավունքի պետական գրանցման վարույթը կասեցվում է «Գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման մասին» ՀՀ օրենքի **28-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով** սահմանված հիմքերով, քանի որ՝*

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ-ի սեփականություն հանդիսացող Մարզ Կոտայք, համայնք Բյուրեղավան Բյուրեղավան ք. Զորավար Անդրանիկի փողոց 2/84 հասցեի անշարժ գույքը ըստ կադաստրային գործում առկա տվյալների սեփականության իրավունքի գրանցման 11.08.2010թ. թիվ 2711164 վկայականի բաղկացած է 0.014532հա հողամասից, 82.9քմ. շինությունից և 7.6քմ. ծածկարանից: Սակայն ներկայացված օտարման պայմանագրում և համայնքի ղեկավարի որոշումներում 7.6քմ. ծածկի վերաբերյալ գրառումները բացակայում են: Անհրաժեշտ է ներկայացնել պարզաբանում

*Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի **Անշարժ գույքի գրանցման միասնական ստորաբաժանման անշարժ գույքի ավագ ռեգիստր ԱՐՍԵՆ ՄԱԼԽԱՍՅԱՆ** **